



Հ. Հ. ՔՅՈՍԵՅԱՆ

ՆՈՐԱՀԱՅՏ ԾԱՌ ՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մաշտոցի անվան Մատենադարանի հայերեն ձեռագրերի Մայր ցուցակի Գ հատորը* խմբագրելիս մեր ուշադրությունը գրավեց № 944 ձեռագրում «Եղիշէի վարդապետի ասացեալ վասն հաղորդութեան» (14աբ) կանոնախրատական բնագրին հետևող և «Երանելոյն Յոհաննու Ոսկեբերանի վասն չսգալոյ զվախճանեալսն, մանաւանդ, որ տղայք անարատք թողին զայս կենցաղս» խորագրով ճառին (16ա—20ա) նախորդող անխորագիր («Այլուստ») ճառագրական մեկ միավոր (14բ—16ա), որը դարձյալ նվիրված է Սուրբ Հաղորդությանը:

Ելնելով այն իրողությունից, որ ճառիս սուրբգրային վկայությունները համապատասխանում են Աստվածաշնչի հայերեն ընկալյալ թարգմանությանը, պետք է ենթադրել, թե հեղինակն անհայտ այս երկը (եթե այն տեղայնացված տարբերակը չէ օտարալեզու բնագրի) հայ հավատացյալի հոգևոր պետքերը դարմանող մի ինքնուրույն աշխատություն է: Ի տարբերություն ավելի ուշ շրջանին հատուկ եկեղեցականորոն վարդապետության, այստեղ իշխողը քրիստոսակենտրոն վարդապետությունն է, որ ավելի հատուկ է դասական հայրախոսությանը: Սա անուղղակիորեն վկայում է, որ խնդրո առարկա միավորը առնչվում է վաղ շրջանի ավանդույթին**: Իր լեզվաոճական նկարագրով այն շատ մոտիկ է Եղիշէի և Ոսկեբերանի ճառերում կիրառված ճարտասանական ձևերին, որոնք հատկորոշվում են բարձր ու ազնիվ հուզականությամբ: Այսուամենայնիվ, քիչ թե շատ հավաստի փաստերի չգոյության պատճառով, դժվար է հստակ կարծիք հայտնել ճառի հեղինակային պատկանելության մասին:

Ծառն աչքի է ընկնում իր հարուստ բառագանձով: Այստեղ կիրարկ-

* «Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի» հտ. Գ, կազմեց Օ. Եգանեանը, խմբագրեց Փ. Անթաթեանը, Յ. Քյոսեեանը (անտիպ):

** Տես թեկուզ «Յովհաննու Մանդակունույ Վասն զգուշութեամբ մերձեցալոյ ի մարմին և յարին Որդոյն Աստուծոյ» ճառը («Տեառն Յովհաննու Մանդակունույ Հայոց հայրապետի ճառք», Վենետիկ, 1860, էջ 165—173):

ված «**ձաղկոծ**» և **խոռաքաղ** բառերը բացակայում են Նոր Հայկագյան բառարանում:

Ծառը հրապարակվում է մեզ հայտնի միակ՝ № 944 ձեռագրի հիման վրա: Զեռագիրը ժողովածու Ոսկեփորիկ է, որն ընդօրինակվել է 1431 թ. Երեզ անապատում Հովհաննես (1ա—52բ) և Ղազար (53ա—227ա) աբեղաների ձեռքով: Ստացողը Ծնոֆոր խաթունն է: **Թերթաքանակը՝ 227: Պրակ՝ Ա—Ի×12 (ԺԸ 11, ԺԹ 8, Ի 4): Նյութ՝ թուղթ: Մեծություն՝ 28×18: Գրություն՝ միասյուն: Գիր՝ բոլորգիր (տարբեր ըստ գրիչների): Տող՝ 27 (երբեմն՝ 22—26)***:**

[ՎԱՍՆ ՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ]

Լուիցուք բանիցս, կամակար յաժարութեամբ մատիցուք և ճաշակեացուք զքաղցրութիւն Փրկչին մերոյ: Զգուշութեամբ և երկիւղի^{1*}, հաւատով և յուսով, սիրով և խոնարհութեամբ դիմեացուք ծարաւիքս առ աղբիւրն կենաց և արբցուք զիմաստութիւն, արբցուք զկենդանութիւն արբցուք զլոյս և զճրմարտութիւն: «Ո՛ր ծարաւիդ էք, ասէ, երթա[յ]ք ի ջուրն և վաճառեցէք առանց արծ[աթ]ոյ զձրի թողութիւն»¹: Այ[ս]պէս և աստ պարտ է ասել. «Եկայք ճաշակեցէք զձրի թողութիւն, եկա[յ]ք արբէք զանգին փրկութիւն, եկայք զմայլեցարուք յուխս փափկութեան, առէք զլոյս, առէք զգիտութիւն, առէք զմանանայն կենաց, զանճախելին, զանձորելին, զանիմանալի ծերն զերիտասարդեալն վազեցէ, տղայն զմանուկն յառաջեցէ, կոյսն զամուսնացելովն և ամուսնացեալն զպառաւովն անցցէ, լրբեցարուք զբարիոք լրբութիւն զառիթ կենաց, զառաջնորդն փրկութեան: Գովելի է խիզախութիւնս, պատուելի է համարձակութիւնս, փարելի է տենչումն, դեղ է կենաց, բժիշկ է բաղձալի^{2*}, նորոգումն ոգոց, մաքրութիւն է մարմնոյ, լոյս խաւարելոց, յոյս յարութեան, ճանապարհ ճշմարտութեան, դուռն կենաց, հաց իմանալի, բաժակ անհետազատելի: «Երանի ո քաղցեալ և ծարաւի իցեն արդարութեան, զի նոք[ա] յագեցցին»². միայն զգուշութեամբ, միայն զղջմամբ, միայն մաքրութեամբ, միայն ապաշխարութեամբ, միայն երկեղիւ և ամաթխածութեամբ^{3*} և պատկառանաւք, զհոգևոր պատկառանս, միայն տքնութեամբ և արթնութեամբ, միայն ողորմածութեամբ և բարեգործութեամբ: Մի՛ որ ռիսակալ մերձեցի, մի՛ որ՝ հպարտ և ամբարտաւան, մի՛ որ՝ անգեղջ և անարտասուք, մի՛ որ՝ ագահ և անիրաւ, մի՛ որ՝ անգութ և անկարեկից, մի՛ որ արբեցող և շռայլ, զի մի իբրև զՆադար^{4*} և զԱբիուդ այրեցցին³, զի նոցա պատմունանքն ամբողջ մնացին՝ յարիմակ մարմնոց մերոց, զի այնպէս լիցի, յորժամ որ անարժանութեամբ հաղորդի: Նայ և զմարմնոյ վիշտ և զվտանգ առաքեալ յայտ առնէ ասելով. «Հիւանդք բազումք ախտածէտք»⁴ վասն այնպիսի լըրբութեան իցէ: Մի որ խոռաքաղ հեշտասիրութեամբ ախտից, զի մի տան-

*** Նկարագրությունն ըստ վկայակոչված Զեռագրացուցակի:

1* **ձեռ.** երկեղի:

¹ Եւայի ԾԵ 1:

2* **ձեռ.** բաղիձալի:

² Մատթ. Ե 6:

3* **ձեռ.** ամաթխածութեամբ:

4* **ձեռ.** զԱնարադ:

³ Տե՛ս Ղեւո Ժ 1—2:

⁴ Ա. Կորնթ. ԺԱ 30:

ջեսցի, իբր զարիմական զայն, մի՛ յոք գող է ագահ և խորող տերունականաց, զի մի քարկոծեսցի յաստուածային պատուիրանացն իբր զԱքար, զԱմրան առ Յեսու Նաեան⁵, մի՛ յոք լիբբ և ապառում, որպէս Յուդա, զի մի առ տեղաւ ձաղկոծ լիցի յաստուածախաւս բերանոյ, մի՛ յոք զլացաղ և ուշտ շնորհացն Աստուծոյ՝ ոչ տալ առատութեամբ և սիրով ի տրապիզիտն հոգևոր զպարգևս Փրկչին, զի մի առժամայն մահաացի, իբր զԱնանիսան և զՍափիրայն⁶, մի՛ յոք ցանկացող ատար վայելից և շնորհաց, զի յանդիմանեալ և հեռահալած լիցի իբր զԱքաաբ⁷ և զՍիմոն⁸ զայն եղկելի, զի ամենայն, որ առնէ զմեղս, ծառայ է մեղացն, և ծառայն ոչ լիցի ժառանգ տէրունեացն: «Եղերութ, ասէ, սուրբն, զի ես սուրբ եմ»⁹: Տէր Աստուած մեր և սրբութիւն վայել է սրբոց և տանար Աստուծոյ սուրբ է, ասէ առաքեալ, որ «էք դուք և բնակեցայց, ասէ, ի նոսայ»¹⁰, և գնացից և ինձ սեփականեցից ի վերստին սիրով: Եւ զի հաղորդութիւն միատրութիւն է ընդ Քրիստոսի, և ուր Որդի բնակէ, անդ՝ և՛ Հայր, և՛ Հոգի: Եւ ի հաղորդելն սրբութեամբ կառք քրովբէական լինիցին մարդիկ հողեղէն բնութեամբ ամենայսուրբ Երրորդութենէ: Եւ զինչ ասեմ կառք քրովբէական Աստուած ընդ Աստուած միատրեալ: Հուր է հաղորդութիւն, և ի հաղորդելն, առ ով գտանք յարդատեսակ կամ եղեգն[ե]ա, մնան մեղս, այրէ և տանջէ զգործողն, իսկ յորս գլտանէ ոսկիատեսակ առաքինութիւն, հրազինէ և մաքրէ: Վասն որոյ ոչ հուսահատութեամբ հրաժ[ար]ելն [է] բարի և ոչ՝ լրբութեամբ խիզախելն, այլ ընդրողութեամբ վայելելն, և որ պսակի և պատուոյ առնէ արժանի և փառաւք փալեցուցանէ անզուգական և գերապայծառ, յորս լիցի ամենեցուն մեզ վայելել շնորհք մարդասիրին Քրիստոսի, որ է արհմեալ ընդ Հայր և Հոգւոյն Սրբոյ յաւիտեանս:

⁵ Տե՛ս Յես 2 18, է 1—26, Ա Մնաց. Բ 7:

⁶ Տե՛ս Գործք Ե 1—10:

⁷ Տե՛ս Գ Թագ. ԺԶ 29—ԻԲ 40:

⁸ Տե՛ս Գործք Ը 9—24:

⁹ Ա Պետ. Ա 16:

¹⁰ Բ Կորնթ. Զ 16:

